

Ի՞նչ է UUT-ին և ինչպիսի՞ ազդեցություն է ունենում մեզ վրա

Կենցաղսպասարկման ծառայությունների օգտագործման հարկը, որը անգլերեն սկզբնատեսքով կոչվում է UUT, ներառում է էլեկտրական հոսանքի, ջրի, բնական գազի, կարելային հեռուստատեսության և հեռախոսի համար գանձվող հարկը: 1969 թվականից ի վեր Գլենդելը, Կալիֆորնիայի տարածքի մյուս ֆաղաֆների մեծ մասը, իր UUT-ի 7 տոկոսը օգտագործել է որպես եկամուտ համայնքային բազմազան և կարևոր ծառայությունները ֆինանսավորելու համար:

Գլենդելի ֆաղաֆատարանը UUT-ի միջոցառումը առաջադրել է 2009 թվականի Ապրիլին կայանալիք ֆվեարկություններում՝ ներկայիս UUT-ի համակարգը արդիականացնելու համար: Միջոցառումը ներկայիս UUT-ն 7 տոկոսից կիջեցնի 6.5 տոկոսի և հավասարապես կվերաբերի հեռահաղորդակցական բոլոր տեխնոլոգիաներին: Ստորև ներկայացված են սույն միջոցառման մասին հանախ բարձրացվող հարցերը:–

- 1. Եթե այս միջոցառումը վավերացվի Բվեարկուների կողմից, այն ինչպես կարդիականացնի Գլենդելի UUT-ն:**
Միջոցառումը կարտոնի, որ ֆաղաֆատարանը միանման և անաչառ կերպով վերաբերվի հեռահաղորդակցական և վիդիո ծառայությունների օգտագործողների նկատմամբ: Այն կերաշխավորի, որ «ավանդական» այնպիսի տեխնոլոգիաների գործածողները, ինչպիսիք են հեռախոսագծերը, բջջային հեռախոսներն ու կարելային գծերը, վերջերս զարգացված այնպիսի տեխնոլոգիաների գործածողների համեմատությամբ, ինչպիսիք է համացանցային համակարգով աշխատող հեռախոսագծերը (Voice over Internet Protocol), հարկային ավելի ծանր բեռի տակ չեն մտնի:
- 2. Ի՞նչ է անում UUT-ի հիմնադրամը:**
Անցյալ տարի Գլենդելի հեռահաղորդակցական հատվածի UUT-ը 8 միլիոն 9 հարյուր հազար դոլար տրամադրեց ֆաղաֆային այնպիսի կարևոր ծառայությունների համար, ինչպիսիք են ոստիկանությունը, հրշեջկայանը, շտապ օգնությունը, գրոսայգիների և վերաբարմացման ծառայությունները, գրադարանները, փողոցները և հանրային վայրերի պահպանությունը:
- 3. Արդյո՞ք դա նոր հարկ է:**
Ոչ: UUT-ը գանձվում է 1969 թվականից ի վեր: Այս միջոցառումը կարգավորում է ֆաղաֆատարանի ներկայիս UUT-ի համակարգը՝ դաշնակցային կառավարության օրենքի նոր փոփոխություններին համապատասխանվելու համար:
- 4. Արդյո՞ք ֆաղաֆատարանը UUT-ն արդիականացնում է հավելյալ եկամուտ սպահովելու միակ նպատակի համար:**
Ոչ: Այս միջոցառումը նախագծվել է եկամտային չեզոքություն ստեղծելու համար: Փաստորեն, եթե այս միջոցառումը վավերացվի Բվեարկուների կողմից, այն կարելային, վիդիոյի և հեռահաղորդակցական ծառայությունների ներկայիս UUT-ը 7 տոկոսից կիջեցնի 6.5 տոկոսի, մինչ նվազեցված այդ գինը կվերաբերի հեռախոսային հեռակա և Voice over Internet Protocol որոշակի ծառայությունների, որոնք ներկայումս չեն հարկվում:
- 5. Արդյո՞ք այս միջոցառումը հարկման կենթարկի ինտերնետային հնարավորությունները:**
Ոչ: Միջոցառումը հարկման չի ենթարկի ինտերնետային հնարավորությունները: Դաշնակցային կառավարության օրենքի համաձայն, ինտերնետային հնարավորությունները հարկման չեն ենթարկվում: Բացի այդ, սույն միջոցառումը հարկման չի ենթարկի նաև թվանցված այնպիսի ներդրումներ, ինչպիսիք են երաժշտությունը, խաղերը և հեռախոսագանգի եղանակները:
- 6. Համայնքը կարո՞ղ է տեսնել, թե ինչպես են ծախսվում սույն գումարները:**
Միջոցառումը մի պայման ունի, որն արտոնում է ամենամյա հաշվետուում կատարել վստահանալու համար, որ ֆաղաֆատարանը պատշաճորեն է գանձում ու ծախսում այդ հարկերը: Հաշվետուումը պիտի կատարվի անկախ ու որակյալ երրորդական կողմի ձեռքով և արդյունքները պիտի տրամադրելի լինեն հանրությանը:
- 7. Ի՞նչ կպատահի ներկայիս UUT-ին, եթե միջոցառումը չվավերացվի Բվեարկուների կողմից:**
UUT-ը կմնա 7 տոկոսով: Այդուհանդերձ, 8 միլիոն 9 հարյուր հազար դոլարը կենթարկվի օրինական մարտահրավերների: Կարող են ազդեցություն կրել ֆաղաֆի այնպիսի կարևոր ծառայությունները, ինչպիսիք են ոստիկանությունը, հրշեջկայանը, շտապ օգնությունը, գրոսայգիների և վերաբարմացման ծառայությունները, գրադարանները, փողոցները և հանրային վայրերի պահպանությունը:
- 8. Եթե միջոցառումը վավերացվի, ցածր եկամուտ ունեցող բնակիչները, ովքեր ներկայումս բացառվում են UUT-ը վճարելուց, արդե՞տք կշարունակեն բացառված համարվել:**
Այո: Ցածր եկամուտով բնակիչները կշարունակեն բացառված համարվել UUT-ը վճարելուց:
- 9. Արդյո՞ք Գլենդելը միակ ֆաղաֆն է, որ արդիականացնում է իր UUT-ը:**
Ոչ: Կալիֆորնիայի ավելի քան 150 ֆաղաֆներ պահպանում են UUT-ը: Հիշյալ հարկի համակարգն արդիականացրած ֆաղաֆաների թվում են Փասադենան, Լոս Անջելոսը, Լոնգ Բիչը, Քալվեր Սիտին, Վենթյուրան և Սիեռա Մադրեն: Այսօրվա դրությամբ Կալիֆորնիայի հեռահաղորդակցական միջոցների UUT-ի մոտավորապես երկու երրորդի համակարգերն արդեն իսկ վավերացված են Բվեարկուների կողմից: